

դապետ ծառայ եւ միաբան Սրբազան Առաքելոյն Թադէոսի» (լատիներէնի մէջ նաեւ՝ Armenus persa, այսինքն՝ Հայ պարսկաստանցի): Ասոնք կը յիշեն իրենց ժամանակի կաթողիկէ վարդապետները: «Իսաակ անուանեալ Արդար, Սարգիս Կաֆացի, Բարսեղ Շէհրիման, Վարդան Արքեպ. Լեմբէրգի եւ Աստուածատուր յաջորդ նորին, Օքսենտիոս Եպս. Տրանսիլլուանիոյ, Բարսեղ Թարգման Ս. Ժողովոյ (վախճանեալ), Յովհաննէս առաքելական միսիոնար ի վենետիկ (վախճ.), Խաչատուր Առաքելեան, Յովհ. Արքեպ. Կաֆացի որ վարդապետութիւն տուաւ Մելքոն Եպս. ի՞ որ մարտիրոսացած է ի Կ. Պոլիս, Անաստաս Եարութիւն Արքեպ. Կեսարիոյ Պաղեստինի, Յովհ. եւ Մինաս՝ որոնք Պոլիս միսիոնար են, Գրիգոր Արքեպ. որ ի Հռոմ շեռնագրիչ էր (վախճ.) Գասպար՝ որ ի Պէլիկրատ, Մինաս՝ որ ի Տրանսիլլուանիա, Ստեփան Խաչատուր՝ որ ի Լիվոնոյ, Ստեփան Աստուածատուր՝ որ ի Հռոմ, եւ Վրթանէս Արքեպ. շեռնագրիչ ի Հռոմ:»

Վենետիկէն 1911ին Գեղյ. Հ. Յովհ. Ծ. Վ. Թորոսեան իմ խնդրանացս իբր պատասխան վանքին ժամանակագրութենէն կը հաղորդէ Յարութիւն Արք. ի մասին. «... Սա ընդգրկելով ուղղափառ կաթողիկէ հաւատքը, որուն համար հալածուելով եւ զանազան վիշտեր կրելով, Թողուց իր Թեմը՝ Եւրոպա փախաւ, եւ շատ տարիներ ասդիս անդին շրջելով, ի վերջոյ եկաւ Վենետիկ եւ հաստատուեցաւ հոս 1728 թուա-